

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱՆՈՍԻ ԿԱՐԾԻՔ

**Աննա Վարդանի Վարդանյանի «ՀՀ սահմանամերձ բնակավայրերի տարածական միջավայրի ռազմադիմակայունության ճարտարապետական առանձնահատկությունները» թեմայով ԺԸ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

Աննա Վարդանի Վարդանյանի «ՀՀ սահմանամերձ բնակավայրերի տարածական միջավայրի ռազմադիմակայունության ճարտարապետական առանձնահատկությունները» ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածից, որն իր մեջ ներառում է 55 նկար և գծագրեր, ինչպես նաև դրանց բացատրությունները:

**Ներածության** տեքստում հեղինակը պարզաբանում է իր հետազոտությունների կարևորությունն ընդհանրապես և մասնավորապես՝ մեր երկրի համար այսօր ստեղծված ճգնաժամային իրավիճակից ելնելով: Հիմնվելով պետության գոյության և բնականոն զարգացման սկզբունքների վրա, նա դիտարկում է խնդիրների մի ամբողջ բույլ, որը, ինչպես ինքն է նկարագրում, «Հայաստանի Հանրապետության առջև այսօր ծառայած մարտահրավերներից մեկը սահմանամերձ բնակավայրերի տարածքային համաչափ զարգացմանը միտված ծրագրերի իրականացման համար անվտանգ կենսագործունեության ապահովումն է» և որպես խնդրի լուծման ճանապահ առաջարկում է ռազմական սպառնալիքի դիմակայության իր սեփական տեսակետը, կամ կարելի պնդել՝ մոդելը: Իր գիտական պրպտումների արգասիքը՝ այս ատենախոսությունը, այն բանից զատ, որ ճարտարապետություն է, անվանում է «ռազմադիմակայունություն»: Գիտական տեսանկյունից միջառարկայական խնդիր, որտեղ ճարտարապետությունը ուղղակիորեն առնչվում է ճարտարագիտությանը, ռազմական գործին և զինատեսակներին, լադաֆտի ռելիեֆային առանձնահատկություններին, բնակավայրերի ծավալատարածական միջավայրի անհրաժեշտ կանոնակարգման խնդիրներին, հնարավոր պատերազմական գործողությունների դեպքում սպառնալիքը նվազագույն կորուստներով, այդ թվում առաջնահերթաբար կարևորելով մարդկայինը և առաջարկում է ճարտարապետության նոր սկզբունքներ:

Այս սկզբունքները ի հարկե նոր չեն, սակայն առաջին անգամն է, որ անկախ Հայաստանում դիտարկվում են գիտական տեսանկյունից ճարտարապետության մեջ: Հեղինակը կարևորում է կառույցների այս սկզբունքները սահմանամերձ բնակավայրերի համար, սակայն ինքնին պարզ է, որ ժամանակակից գինատեսակների խորքային խոցելիության պայմաններում, այն վերաբերվում է ամբողջ Հայաստանին:

**Առաջին գլխում ներկայացնում է** պատերազմների և սպառազինության զարգացման պատմական ընդհանրականը, հակիրճ, բայց բովանդակային նկարագրի վերջում, անշուշտ հիմնվելով մատչելի, իր կողմից հետազոտված բավականին քանակությամբ գրականության մեջ եղած տեղեկատվական նյութին, գնահատում է արդի և ապագա հնարավոր պատերազմների կազմակերպման և պաշպանության խնդիրներին, ինչպես հեղինակն է նշում՝ պատերազմի հինգերորդ և վեցերորդ սերունդների համար:

✓ **Հինգերորդ սերունդի** հիմնական առավելություններն ավտոմատ կառավարման համակարգերն են, արբանյակային կապի, գերճշգրիտ սպառազինության փոխկապակցված, համատեղ կիրառումը: Տեղեկատվական ազդեցությունը դարձավ որոշիչ:

✓ **Վեցերորդ սերունդ (Արդի ժամանակաշրջան):** Պատերազմի այս սերունդը թվային, արհեստական բանականության, լայն կոմունիկացիոն ցանցերի դարաշրջանի պատերազմն է, էլեկտրամագնիսական էներգիայի կիրառման, լազերային և այլ էներգիայի աղբյուրների պատերազմը:

Այստեղ առենախոսը բերում է օրինակներ որպես մեր օրերում ընթացող, վերջերս տեղի ունեցած պատերազմներից և արժանահավատ եզրակացություններ կատարում: Ավելին **«Հ պաշտպանության մասին օրենքից** բխող «ազմական գործողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության **դիմակայությունն է»** իր առենախոսության թեզը զարգացնում է հենց այդ ուղղությամբ: Այս պահից սկսած առենախոսը սկսում է ընդհանրական հասկացողություններից սահուն անցում է կատարում դեպի շենքերը, շինությունները և ճարտարապետական առանձնահատկությունները, որոնց անտեսումը կբերի նոր սպառնալիքների և վերջնական հաշվով՝ պարտության:

**Գլուխ 2-ը** նվիրված է **տարածական պլանավորման մեջ ռազմադիմակայունության առանձնահատկություններին**: Բնակավայրերի տեղադիրքից, լանդշաֆտից և այլ հանգամանքներից կախված պլանավորումը ռազմադիմակայության տեսանկյունից քննարկվում է բազմակողմանիորեն: Սկսած մայրուղիների, ճանապարհների ռիսկային եզակիությունից մինչև առանձին բազմաբնակարան շենքերի անվտանգության ապահովման նպատակով կոնստրուկտիվ և որոշ դեպքերում էլ արմատական փոփոխություններ կատարելու անհրաժեշտության առաջարկը: Ներկայացված են բանաձևեր, որոնց շնորհիվ տեսականորեն կարելի է հաշվարկել համապատասխան զենքի կիրառման դեպքում առաջացող կորուստները: Կարևորվում է հաղորդակցության միջոցների նախապես անվտանգ դարձնելու խնդիրը: Այսինքն ոչ միայն պատերազմական իրավիճակում, այլ նույնիսկ խաղաղ պայմաններում հաղորդակցության միջոցները՝ բնակավայր մտնող և դուրս եկող ճանապարհների, էլեկտրոէներգիայի, գազի խողովակաշարի, բաշխման կայանների եզակիությունը բնակավայրին զրկում է, թեկուզ և տեսականորեն, ռազմավարական անխոցելիության հնարավորությունից:

**Գլուխ 3-ում** գլխում հեղինակը ներկայացնում է տարբեր տիպի բնակավայրերում շենքերի և շինությունների տեղաբաշխումը և դիտարկում խոցելիությունը, ինչպես շենքերի տեղաբաշխման, այնպես էլ նրանց կոստրուկցիաների խոցելիության տեսանկյունից:

«Շենքերը և շինությունները, ըստ հորինվածքի, կարող են լինել.

1. գծային,
2. անկանոն,
3. բակային,
4. անկյունային
5. բևեռացված»

Ապա յուրաքանչյուր իրականության համար մանրակրկիտ վերլուծում է կոնստրուկտիվ բաղադրիչների և տարածական տեղաբաշխման պլանավորումից սկսած մինչև շենքերի ու թաղամասերի խոցելիությունը: Վերլուծությունները և առաջարկները համոզիչ են և կիրառելի, նույնիսկ ծախսերի դեպքում: Այստեղ նա խորանում է ընդհուպ մինչև շինանյութը և լուսամուտների խոցելիությունը և

կատարում առաջարկություններ, որոնք ոչ միայն ընդունելի են, այլև, առաջին հայացքից, ենթադրում են գործընթացներ՝ առանց նախագծային նախահաշիվը մեծացնելու՝ փոքրիկ շտկումներ այս կամ այն կոնստրուկտիվ հատվածում:

Այսպիսով թեման արդիական է, կարևոր և հրատապ: Ատենախոսությունը կազմված է գրագետ, գործի իմացությամբ: Պարզ երևում է, որ հեղինակը գործնականում եղել է, հետազոտել է պայթյունից վնասված շենքերը, շինությունները, կատարել հաշվարկներ, եզրակացություններ:

Համոզված եմ, որ եթե նույն ջանասիրությամբ աշխատելու և ձեռնարկ կամ գիրք գրեր, ապա այն մեծ հասարակական արձագանք կունենար ոչ միայն սահմանամերձ գոտիներում ապրողների շրջանում:

Հաշվի առնելով վերոնշյալը, գտնում եմ, որ ներկայացված «ՀՀ սահմանամերձ բնակավայրերի տարածական միջավայրի ռազմադիմակայունության ճարտարապետական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Աննա Վարդանի Վարդանյանը լիովին արժանի է ԺԸ.00.01 – «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ծ.դ., Գեոէկոլոգիայի պրոֆեսոր

Ս.Մ. Շահինյան

Ս.Մ. Շահինյանի ստորագրությունը

հաստատում եմ՝ ԾՇՀԱՀ Գիտական

քարտուղար, տ.գ.թ., դոցենտ



Լ.Լ.Լևոնյան

20.06.2024